

ՕՐԱԳԻՐ

10 ՓՐՅ.

10 ՓՐՅ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐ ԱՌԵՒՏՔԻՆԱՆ

Գ. ՏԱՐԻ 1290 ՄԷՖԵՐ 26

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 11 ԱՊՐԻԼ 1873

Ն. Տ. ԱՊՐԻԼ 23 ԹԻԻ 911

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ՏՈՒՆ ՕՐՀՆԵՆԻՔ

Շատ բարի սովորութիւն մ'է այս՝ որ պահուած է ազգին մէջ ոչ թէ իւր բարոյական նշանակութեանը՝ այլ նիւթական նշանակութեանն համար:

Թող այնպէս ըլլայ, վասն զի տակաւին իւր բարի հետեանքները կրնայ ունենալ:

Հարուստին համար չէ խօսքերնիս, այլ աղքատին համար միայն, զի հարուստը ասկից օգտելու պէտք մը չունի, այլ աղքատն է որ՝ տարի մը ամբողջ անմխիթար մնալէն վերջը՝ տաւրին երկու օր միայն իւր քահանային այցելութիւնը պիտի վայելէ, իւր ցաւերըն պիտի ըսէ անոր, իւր վիճակը պիտի յայտնէ անոր և պիտի ըմբռնէ իւր մշտքին մէջ թէ՛ կայ եղբր կապ մը՝ որով կապուած է նա մեծ ընդհանրութեան մը հետ՝ իւր ազգին և կրօնակցին հետ:

Սակայն դժբաղդաբար մեր քահանայներէն շատերն՝ այդ մխիթարութիւնըն ալ կը զլանան. աղքատին, չեն երթար աղքատին տունն օրհնելու, վաստն զի ստակ չունի նա վճարելու:

Այսպիսիներն իրաւամբ անարժան են քահանայ կոչուելու. սակայն ուրկից պիտի իմացուին ասանկներն. աղքատը չունի տեղ իմացնելու և մոռցած իսկ է թերևս քահանային այդ նկատմամբ ունեցած պարտաւորութիւնը:

Հապա պանդուխտ ազգայիններն ո՛ւր դնենք. սա է քահանային ամենէն

շատ ստակ վճարողը եկեղեցւոյ մէջ, բայց ո՛ր քահանայն կայ որ երթայ խեղճ ու թշուառ պանդխտին սենեակն օրհնելու և անոր ցաւերն իմանալու:

Խեղճերէն խոտովանութիւնը զլացող քահանայն՝ պիտի այցելու թի՛ւն տայ պանդխտին սենեակը:

Ի՞նչ աղւոր առիթ մ'է այս տունն օրհնենքի սովորութիւնը, ազգին ամեն նկատմամբ վիճակագրութիւնն ընելու:

Բայց ո՛վ կը խորհի և ո՛վ կը հրամայէ:

Եթէ կրօնական ժողովը այդպիսի հրահանգ մը տալու ըլլայ, և ըստ այդմ հրահանգի ամեն տարի վիճակագրութիւնը նորոգուի՝ շատ և շատ մեծ գործ մը տեսած կըլլայ, զի ատով միայն կրնանք իմանալ թէ՛ յառաջ երթալու վրայ ենք՝ թէ ետ ետ կը մղուինք:

19րդ դար ըսելով պարսպ տեղը բացառանշուծիւններով ինքզինքնիս չը խաբենք. ո՛վ որ իր վիճակը չը գիտեր՝ նա բան մը չը գիտեր:

Այս վիճակագրութեան հրահանգը պէտք չէ միայն Պօլսոյ շրջանակին մէջ պահել, այլ գաւառներն ալ տարածելու է:

Երկու միլիոն Հայ կայ կրօնք Տաճկաստանի մէջ, ո՛վ կրնայ հաստատել զայս առանց վիճակագրութեան:

Եւ ինչո՞ւ չը գիտնանք որոշ թիւերնիս, ինչո՞ւ չը գիտնանք տարուէ տարի աւելնալիս կամ պակսելիս. և եթէ կը պակսինք՝ ինչո՞ւ չը բնտուենք ատոր պատճառը և չը դարմանենք:

Ուրբաթ օր Ս. Զատիկ վերնագրով

յօդուածով մը՝ Հիւանդանոցը յիշեցուցած էինք ազգին, գոհ ենք որ՝ ձայն բարբառոյ յանապատի չը մնաց մեր ազգարարութիւնը, ուստի ուրախութեամբ կիմացնենք թէ՛ Ս. Փրկչէ պատասպարեալը միջին կարգի բնտանիքի մը կեանքն ունեցան Ս. Զատիկի օրերն:

Մեր սկիւրիչ հայազգիք ձեռամբ սատեքեար Անդրանիկ աղայի նշաստանների հանդանակութիւն մը բանալով նուիրեցին 105 հաւ առաջին կարգի, 250 բօրթուքալ, 2 սնտուկ շէհրիյէ, 200 հաւկիթ և 75 լիմօն, որով կիրակի առաւօտ Հիւանդանոցի պատասպարելոց հացկերոյթ մը տրուեցաւ՝ հաւէ և հաւի ջուրով ապուրէ:

Նուիրեց նաև իշլէմէճի հայազգեաց ընկերութիւն մը 62 հօխայ ապուխտ, ձեռամբ 30 հաննէս աղա Սիւտճեանի:

Նուիրեց նաև բարեպաշտ ոմն 1500 հաւկիթ, ուրիշ ընկերութիւն մ'ալ 20 հաւ, 600 հաւկիթ և 21 հօխայ շէհրիյէ, ուրիշ մ'ալ 40 հաւ:

Մեր առած տեղեկութիւնն այսչափ է, որու վրայ թէև պէտք է գոհ ըլլանք մէկ կողմէն, բայց կը ցաւինք միւս կողմէն որ՝ հարուստ ազգայինք անշարժ կեցան այս մասին:

Սամաթիոյ բնակիչներէն հինգ անբասիր երիտասարդք՝ ասկից յառաջ իբրև գող ձերբակալուած և ոստիկանութեան դուռը քննութեան ենթարկուած էին՝ արտաքին յարաբերութիւններէ դադարեալ վիճակի մէջ:

Այս անգամ՝ գոհութեամբ կիմացընենք թէ՛ խթման երեկոյին ուշ ատեն

արձակուեցան՝ առանց բան մը կարենալ հաստատուելու վրանին, որոց օգնութեան հասան Հայկ. ընկերութեան անդամք և իսկոյն հանգանակութիւն մը բանալով 13 ոսկւոյ չափ գումար մը հաւաքեցին ՚ի նպատ յիշեալ երիտասարդաց :

... Խմբագիր.

Խնդրեմ բարեհաճիք հետեւեալ նամակը հրատարակել պատուական լրագրոյդ մէջ ի գիտութիւն խնայ. Ընկերութեան Մեծ. Բաժանորդաց :

«Ուրախ ենք յայտնել թէ Ընկերութիւնս, որ դեռ մէկ ամսէ ի վեր ծնած է, այսու ամենայնիւ բաժանորդաց թիւն այսօր ութը հարիւր տասնի հասած է, և հետեւաբար միայն 190 բաժին բաց ունինք: Վասնորոյ կը ծանուցուի Արգոյ Հասարակութեան թէ այսօրուրն սկսեալ մինչև ապրիլ 27 երորդ օրն, ընկեր գրուիլ ուզողը կրնա, ներկայանալ Ընկ. Գրասենեակը, զի ամսոյս 27 երորդ օրն ստորագրութեան տետրը պիտի գոցուի, և Մայիս 6 կիրակէ օրն, ընկերութեանս բաժանորդաց նուէրաբաշխումը կատարել որոշուած ըլլալն յայտնելով, կը հրաւիրեմք Ընկ. Բաժանորդաց, որք նոյն օրը բարեհաճին, յետիքուէ Ազգ. Հիւանդանոցը գալ, նուէրաբաշխման հանդէսին ներկայ գտնուելու :

Ի դիմաց խնայ. Ընկ. Հիմնադիր Ժողովոյ

ՏՕԲԹՕՐ ԻԻԹԻԻՃԵԱՆ

1873 ապրիլ 3 Կ. Պօլիս
Քէպապօճի խան թիւ 2

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գաղղիացոց և իրենց քաղաքական լրագրաց նկատմամբ Գերմանական թերթ մը հետեւեալ դիտողութիւնները կ'ընէ :

Գաղղիացոց համարումը, կ'ըսէ, օտար երկիրներու մէջ աղէկ չ'ըլլալէն զատ, շատ ալ գէշ է ոյսօր: Այսպիսի գէշ համարման մը պատճառը ոչ այնչափ Գաղղիացոց խօսքերն ու գործքն է, որչափ իրենց գրագէտներն կամ լրագրագետներն: Ասոնք Գաղղիացի ազգին ամենէն վտանգաւոր մասը կը կազմեն: Գաղղիա որչափ չարիք որ կըրեց կամ կրել տուաւ ուրիշին տասը

տարիէն ՚ի վեր է, ամենքն ալ անխըտիր մեծ մասամբ լրագրաց մահաբեր ազդեցութեանը երեսէն է :

Լրագրագետներն ու վաստարաններն, — այս վերջիններն երկու պաշտօն ունին, թէ ատենաբան են և թէ լրագրագետ, — ձեռք ձեռքի տուած են երկիրը կործանելու: Գաղղիա ասոնց կը պարտի թէ 1870 ի պատերազմը, թէ մինչև իւր բոլորովին պարտութիւնը պատերազմին երկարիլը, և թէ Քօմիւնը: Գաղղիացի թերթերն են որ յառաջ բերին ու կ'արծարծեն Գաղղիոյ և Գերմանիոյ մէջ այն կատաղի ատելութիւնը, որոյ գոյութիւնը ցաւօք կը դիտէ Գերմանիա և որ ոչ այնչափ վրեժասակար է իրեն որ չափ աւելի Գաղղիացոց: Այնքան սուր կորովամտութիւն մը պէտք չէ գուշակելու համար թէ, եթէ այս երկու ազգաց մէջ նորէն կռիւ մը ծագի՝ ամենէն ծանր պատասխանատուութիւնը Գաղղիական թերթերուն վրայ պիտի մնայ: Ասոնք են որ Գաղղիացոց բնաւորութեանցը վրայօք տխուր և շատ անգամ անիրաւ գաղափար մը կուտան Գերմանացոց, և անշուշտ ասկէ ծագումն առած է կրթեալ և աննախապաշար Գերմանացոց սա կարծիքը թէ Գաղղիական ազգը կասկածելի տարրներէ կազմուած բաղադրութիւն մ'է: Գաղղիոյ մէջ բընակողք օտարազգիք դիտեն թէ այս երկրին մէջ շատ կը գտնուին պարկեշտ և խոհական անձինք, իսկ եթէ օտար երկրի մը մէջ այս բանին վրայ կը կասկածին, յանցանքը գաղղիական թերթերունն է :

Քանի մը տարիէ ՚ի վեր, մանաւանդ Ֆրանքօ Գերմանական պատերազմէն և կայսրութեան անկումէն ՚ի վեր է որ բնաւ Բարիզի թերթերուն վտահալութիւն կամ հաւատարմութիւն մը չ'ըլլալը, վասն զի ամեն թէ՛ քաղաքական և թէ՛ կրօնական խնդիրները և թէ անձինքը մի միայն կուսակցական տեսութեամբ կը դիտեն ու կը վճռեն, առանց ճշմարտութեան ուղ գնելու: Չեն վախնար գաղտնի պահել, և մինչև իսկ ուրանալ այլևայլ իրողութիւնք, զայն չը ճանչցնելու չափ կերպարանափոխել, ճշմարտութեան ուղղակի հակառակ հրատարակութիւններն իբրև սկզբունք նկատելով :

Բարիզի թերթերուն այս բնութեանցը թէ օտար երկրի մէջ և թէ Գաղղիացոց լրձամիտ մասին չ'ըով ունեցած

համարումնին ու վարկերնին բոլորովին կոտորելու պատճառ եղած է, ասով հանդերձ, դարձեալ այդ թերթերը գաղղիական անօրինակ բնաւորութեանը շնորհիւ, հասարակաց կարծեաց վրայ մեծ ազդեցութիւն մ'ունենալին կը շարունակեն: Բարիզի լրագրագետաց մէջ կան անանկ մարդիկ որոց ունեցած տաղանդն անուրանալի է, կան ուրիշներ ալ որոնք բունութեամբ կամ անպատկառ անխոհեմութեամբ մը տագորեալ են :

Հասարակութիւնը զբօսանքի համար կը կարգայ լրագիր, և ոչ թէ կրթութեամբ կամ բան սովորելու: Յիկարօ լրագրին դտած անօրինակ յաջողութեան և ընդունելութեան պատճառը ուրիշ բան չէ՛ բայց եթէ սա թէ՛ ամենէն գայթակղալից դէպքերը կենդանի գոյնով մը կը նկարէ, և հետաքրքրական մենամարտութեան մը, մեծ եղեռնագործութեան մը, ամուսնութեան մը կամ առեւանգութեան մը ստոյգ լուրերը ամենէն առաջ ինքք կուտայ: Բարիզիք սկեպտիկեան (1) են, ամեն կարգացածնուն չեն հատար, իրենք զուարճացող, իրենց շահուցը ծառայող և կամ հաճոյքին գոլուող յողուածներ ու դէպքերը կը սիրեն: Ահա ասոր համար է որ անհիմն զրոյց մը ամենայն արագութեամբ Բարիզի և Գաղղիոյ մէջ իսկոյն կը տարածի, և քանի մ'օրէն յետոյ Աւետարանի պատգամ կը դառնայ :

Սակայն պէտք է նկատել որ Բարիզի մէջ մամլոյ ազդեցութիւնը սահմանափակ է: Կուսակցութիւններն մէկը մէկ անոնք կատաղութեամբ կը բըզքտեն որ լրագիրները միայն այն մասին վրայ ազդեցութիւն մը կրնան ունենալ որոյ գաղափարներն որ կը ներկայացնեն: Հանրապետական թերթի մը մէջ մարդու մը նկատմամբ արուած գովեստը, միապետականաց առաջը այդ անձին մահուան դատախիւքն է, երբ: Բարեւ լրագիրը կամպէթթայի ճարտարախօսական հանճարը կը գովաբանէ, կազմէ աը Ֆրանսի բաժանորդներն, երբ այդ արմատական թերթը կարգան, այնպէս կը հասկնան ու կը

(1) Տեսակ մը փիլիսոփայական ազանդ է՝ որ ամեն բանի գոյութեանց վրայ երկբայելու և կասկածելու դրութիւնն ունի իրեն սկզբունք :

մեկնեն թէ այդ երբեմն -գիկտագորը ստակալի շաղակրատ մ'է :

Գաղղիական լրագրաց այս ընթացքին անհմուտ մէկը կը շուարի կը մնայ երբ այդ թերթերը կարդայ : Օրինակի համար՝ Բէրիւպիք Ֆրանսէզ լրագրոյն մէջ կը կարդայ որ՝ Ամբողջ Գաղղիա խորհրդարանի լուծումը կը խնդրէ . — Բէյ լրագրոյն մէջ թէ՛ Ամբողջ Գաղղիա կայսրութեան կողմն է . — Իւնիօն լրագրոյն մէջ թէ՛ Ամբողջ Գաղղիա իւր օրինակը թագաւորները կը խնդրէ . — Պիէն Բիւպիք լրագրոյն ալ մէջ թէ՛ Ամբողջ Գաղղիա պահպանողական Հանրապետութեան նախագահ Պ. Թիէրի կողմն է : Անշուշտ այս թերթերը կարդացող մը չը կրնար հասկնալ ու ըմբռնել այդ . Ամբողջ Գաղղիա խօսքը եթէ չը գիտնայ թէ՛ Բէրիւպիք Ֆրանսէզ թերթը՝ հանրապետական Գաղղիայէն զատ ուրիշ Գաղղիա չը ճանչեր , նոյնպէս Բէյ լրագիրն ալ կայսերական Գաղղիայէն , և Իւնիօն թերթը օրինակորական Գաղղիայէն զատ ուրիշ Գաղղիա չեն ճանչեր : Ուստի Բարիզի լրագիրներն հասկնալու և անոնց հրատարակութեան ճիշդ արժէքն իմանալու և գիտնալու համար , հարկ է որ այդ թերթերն իւրաքանչիւրն իրեն ներկայացուցած կուսակցութեանը տեսութեամբն ըմբռնուի ու այնպէս կարդացուի :

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱՌՍՏՐԻԱ.—ՀՈՒՆԳԱՐԻԱ

Վիէննա 18 ապրիլ

Կիզէլ մեծ դքսուհւոյն ամուսնութեանն առթիւ շատ մը պատուանշաններ շնորհուեցան :

Կայսրն ու իշխանները Արուեստահանդէսն այցելութիւն մ'ընելով , օսմանեան վաճառաց հատուածաբաժնին շատ հաւնեցան :

Վիէննա 20 ապրիլ

Կիզէլ մեծ դքսուհւոյն և Պալիէրայի Լուիբօլտ իշխանին ամուսնութեան արարողութիւնը մեծ ու շքեղ հանդիսիւ կատարուելով , ամբողջ քաղաքը ցընծութեան մէջ է :

Նոր ամուսինք , արարողութիւնը կատարուելէն անմիջապէս յետոյ , Միւնիխ մեկնեցան : Թէ՛ հոս և թէ՛ գաւառներն այս առթիւ լուսավառութիւններ պիտի լինին :

Խորհրդարանը վաղը Բօլոնեցի երեսփոխանաց պաշտօնագիրը պիտի ոչնչացնէ :

ԳԱՂՂԻԱ

Բարիզ 18 ապրիլ

Ընտրութեանց առթիւ աղմկայոյզ գումարումներ տեղի ունեցաւ :

Պ. տը Մանթայֆէյլ Բարիզի գերմանական դեսպան անուանեցաւ , տ'Արնիմ կոմսին տեղ , որուն Լոնտրայի գերմանական դեսպանութիւնը յանձնուեցաւ :

Բարիզ 20 ապրիլ

Պահպանողականը գումարում մ'ընելով , որոշեցին թէ ոչ զՊ. տը Բէմիւղա շատագովեն և ոչ զՊ. Պարօտէ :

ԱՆԳՂԻԱ

Լոնտրա 17 ապրիլ

Թայմզ լրագիրը տակաւին ստուգութեան կարօտ զրոյց մը կը հրատարակէ , որոյ նայելով (Սփրիկէի ներսերը ճանբորդութեան ելնող) Սըր Սամուէլ Պէյբըր , իւր կինը և ուղեկիցներէն ցարդ ողջ մնացողները վայրենի ցեղէրէն սպաննուեր են :

Այս սպանման լուրը հաստատող բնաւ ո և է տեղեկութիւն մը չէ հասեր տակաւին Արտաքին գործոց պաշտօնատունը :

Լոնտրա 18 ապրիլ

Զօրապետ Մուհսին Խան մեկնեցաւ ասկից կոստանդնուպօլիս երթալու , ուր Պարսկաց դեսպանութեան պաշտօնը յանձնուած է վարելու :

Աղէքսանդրիոյ անգղիական հիւպատոսը հեռագրեց լրտ կրանվիլի թէ եգիպտական կառավարութիւնը մարտ 3էն ՚ի վեր Սըր Սամուէլ Պէյբըրի վերայօք աղէկ թէ դէշ բնաւ լուր մը չէ առած :

Լոնտրա 19 ապրիլ

Պառօն տը Լիէպիկ , հռչակաւոր քիմիագէտը երէկ երեկոյ վախճանեցաւ 70 տարեկան հասակին մէջ :

ԵԳԻՊՏՈՍ

Գահիրէ 16 ապրիլ

Պէյբըր (Սըր Սամուէլ) և իւր ուղեկիցներն սպաննուեցան . Հապէշաստանի ճանբորդութիւնը ետ մնաց :

Գահիրէ 20 ապրիլ

Սըր Սամուէլ Պէյբըր ճանապարհորդին սպաննուած բլալուն լուրը սուտ կը հանեն :

ԻՏԱԼԻԱ

Հուլիս 16 ապրիլ

Տէ Անճէլիս գահերէց կարդինալը կանչուեցաւ :

Հուլիս 17 ապրիլ

Պապը , մահուան նախատեսութեամբ , Գերմանիոյ եպիսկոպոսական վիճակաց մէկ մասին համար հրահանգներ պատարաստել տուաւ :

Հուլիս 19 ապրիլ

Թեղանօթ շինող Պ. Քրիւբ Բրուսիացին քաղաքս հասնելով , պատերազմական գործոց պաշտօնէին կողմանէ ընդունուեցաւ :

Հուլիս 20 ապրիլ

Պապը պատարագ մատոյց :

Հուլիս 21 ապրիլ

Պապին առողջութիւնը երթալով բարւոքելու վրայ է :

ՍՊԱՆԻԱ

Մատրիտ 16 ապրիլ

Քարլոսեանք նորէն Բուրիչերտայի վերայ յարձակեցան :

Մատրիտ 17 ապրիլ

Դրամական լուրերը դէշ են :

Մատրիտ 19 ապրիլ

Քարլոսեանք կրանտէլլայի մէջ յաղթուեցան :

Մալակա 20 ապրիլ

Իրենց պաշտօնակալացը դէմ ապրստամբող կամաւոր զօրքերը բանտարկուեցան : Հանդարտութիւնը վերահաստատուեցաւ :

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Աթէնք 15 ապրիլ

Զանթայի երեսփոխանք բողոքեցին խորհրդարանին դոցուելուն դէմ , պաշտօնէութիւնը կ'ամբաստանեն թէ ընտրութեանց վաւերացմանը մէջ կողմնակցութիւն բրած են , և ընդդիմադիր մասին չափաւորութիւնը կը դուլեն :

Աթէնք 18 ապրիլ

Պաշտօնէից փոփոխութեան զրոյց մը կը պտըտի քաղքիս մէջ , առ այժմ զայդ հաստատող բան մը չը կայ :

ՊԵՐՍԿԱՍՏԱՆ

Թեհրան 19 ապրիլ

Այսօր Շահը ճանբայ ելնելով , մեծ հանդիսիւ և ուրախութեան աղաղակներով քաղաքէս մեկնեցաւ Եւրոպա ընելիք ուղևորութեանը ձեռնարկելու : Մեծ եպարքոսը որ հոս կեցած է պաշտօնէից հարկ եղած հրահանգները տալու , քիչ օրէն պիտի մեկնի երթալ Շա-

հին հետ ընկերանալու ֆէնտի մէջ, ուր ն. վեհափառութիւնը մինչև ութ օր պիտի սպասէ իրեն :

Ն Ե Ր Ք Ի Ն

կայսերական հրամանաւ

Նախկին եպարքոս Էօտարաշա ֆօն-եայի կուսակալ :

Գանուբի նախկին կառավարիչ Համաթի բաշա Գանձուց պաշտօնեայ :

Քօնեայի նախկին կառավարիչ Թէքէտտին բաշա Էտրնէի կուսակալ անուանեցան :

— Տպագրական դիւանի տեսչութիւնը գաւառաց լրագրագետներուն շրջաբերական մը զրկելով կը պատուիրէ որ լրագրաց գլխաւոր պաշտօնը՝ երկրագործութեան, վաճառականութեան և արուեստից յառաջադիմութեանը վերաբերեալ օգտակար նիւթեր հրատարակել ըլլալով, տեղական իշխանութեան պաշտօնատարացը նկատմամբ մինչև ցարդ տեղի ունեցած անսահման գովաբանութիւններով էջերին չը լեցնեն և այս տեսակ մարդոց գովեստ կարդալու մասին քիչմը չափաւորութիւն գործածեն :

— Երէկ մեծ տէրութեանց դեսպաններն Բ. Դուռը երթալով, Լիբանանու կառավարիչ Բիւթէմ բաշայի ընտրութեան գիրը Մալֆէթ բաշային հետ ստորագրեր են :

— Բուժէլի երկաթուղեաց արտօնատէր Պառօն տը Հիւրջ կիրակի օրը Բ. Դուռը Մեծ եպարքոսին հետ երկար խորհրդակցութիւն մ'ընելով, կառավարութեան և յիշեալ ընկերութեան մէջ երևան ելած կնճիռներն ու դժուարութիւնները համաձայնութեամբ մը լուծուեր են, մինակ մասնաւոր մէկ քանի կետեր մնացեր են, որոնց ալ քիչ օրէն կարգի դրուելիքը կը յուսացուի :

— Գերմանական դեսպան Պ. տը ֆայտէլ շաբաթ օր պաշտօնական լուր ընդունել է իւր կառավարութենէն, որ իրեն Հռովմի գերմանական դեսպան անուանիլը կը ծանուցանէր, և Պ. Ա. յիման ալ Կ. Պօլսոյ դեսպան անուանել է :

կառավարչուհի մը կուզէ ազգային վարժարաններուն մէկուն մէջ կառա-

վարչութիւն ընել, ինչպէս որ մէկ քանի վարժարաններ ալ ըրած է, ուստի ով որ կուզէ լրագրոյս տպարանէն կրնայ տեղեկութիւն առնել :

ՏԱՎԱ ՎԵՔԻԼԻ

Ղաղարոսեան Գրիգոր Էֆ. Նաֆիլէ խանընտաքի օտասընտան, պուքէրէ Հօճա բաշա ճատտէսինտէ Պապը ալի գարշընտա մախուսէն քիչատ իլլէտիլի մողազանա նագլ էլլէտիլի ըրող տէթլու միւլթերլէրլիսէ վէ էհալիսէ իլան իտէր :

Վ Ի Մ Ա Պ Բ Ս Ո Ւ Ն

Յ. Գ. Կիւրճեան

ՂԱԼԱԹԻԱ ԵՆՆԻՃԱՄԻ

ԷՕՄԵՐ ՓՈՂՈՑ ԹԻԻ-20

Յարութիւն Գ. Կիւրճեան որ Լիթօկրաֆ Սինեօր Չիմինակիին վիմագրողն էր, կը ծանուցանէ Արգոյ աղբայնոց որ այս անգամ վիմագրատուն մը բացած է Ղալաթիա Եննիճամի Էօմէր փողոց թիւ 20 ուր թէ Հայերէն և թէ օտար լեզուներով ամեն տեսակ վիմագրելի առևտրական տոմսակներ, խիստ մաքուր և ուրիշներէն տարբեր գնով պիտի տպագրէ :

Ուստի արգոյ հասարակութեան

կը մնայ Ազգային արհեստաւոր մը քաջալերել մանաւանդ որ ինքը օտարագրի մը ըրածը լաւագոյն և տարբեր գնով ընել կը խոստանայ :

Գարթ վիզիթ 100ը 1 Մէճիտ :

Յ. Գ. Կիւրճեան

Նաև Յ. Գ. Կիւրճեանի վայելչագրութիւնը արդէն Հայերէն Գաղղիերէն Յունարէն և Տաճկերէն հրատակուած է, սր կը ծախուի մի և նոյն տպարանը :

Գին 3 Ղուրուշ :

ԱՇՆԱՆ ՏԵՐԵԻՆԵՐ

Կամ Գաղտնիք Երիտասարդաց

և Պատանեաց

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

Գ. Պաղտասարեան էֆէնտիի վերոյիշեալ անուամբ մէկ նոր և ամենաօգտակար աշխատասիրութիւնն ալ ՚ի լոյս ընծայուած կը ծախուի ամեն գրաւաճառաց քով ՚ի գին 5 Ղըշ :

Կը խրատեմք բոլոր հակազն երիտասարդներն ու պատանիներն որ փութան ոոյն գրքոյիէն ժամ յառաջ մէկ մէկ օրինակ ստանալ և ուշի ուշով

կարդալով իրենց ամենակատաղի թըշնամոյն ճիրաններէն ազատելու միջոցներուն տեղեկանան և քանի որ դեռ հնար է կարենան անկէ ազատիլ, զի ով որ յապաղի և անհոգ ըլլայ օր մը ամեն միջոց անօգուտ պիտի լինի իւր ազատմանը :

Մասնաւորապէս կը խրատեմք ծընողքներն որ ոոյն գրքոյիլը ոչ թէ միայն իրենց տղոց ձեռքը տան այլ նաև ստիպեն մտադրութեամբ կարդալ զայն որոց բազմադիմի օգուտներն թէ անոնք և թէ իրենք պիտի վայելն :

Շատ առնել ուղղները պէտք է դիմեն կեդրոնատեղին ՚ի Ֆրէնկեան գրատուն :

Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն

ՓՈՒԱՆԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՈՂՏԱՐԵՂԵՆԻ

Ժ. Տ. ՃԱՆԵԹՕ ԵՒ ԸՆԿ.

Թիւ 16. — Ղարաթիա ֆօմիսիօն խան :

Մէզքիւր մաղազատա տուէլի մուխթէլիֆէ, վէ ալէլ խուսուս Բուժէլի շրմէնտըֆէրին Իքրամիլի պիլէթլէրի սաթըն ալընըր վէ սաթըլըր, պունտան մատա 20 ֆրանք քըյմէթիմտէ Պուքըրէշ շէհրինին Իքրամիլի պիլէթլէրի, վէ Յէր զշ. Փիլաթլէ մէզքիւր շէհրին Իքրամիլի պիլէթլէրին բրօմէսլէրի տախի սաթըլըր :

Մէզքիւր պիլէթլէրին բիյանքօսու 1873 սէնէսի ալաֆրանկա մայիս 1 տէ Բուսիանըն Բօտա շէհրինտէ պէհէմէհալ շէքիլէճէք օլուպ ետինմէ բրօմէս պիլէթլէրի օլանլարըն նուժէրօլարընա իսապէթ իթտիքտէ թէքմիլ Իքրամիլի եանի 100 պին ֆրանքը վէ եախօտ և պին ինկիլիզ լերասը դաղանաճաքար ալըր :

Մէզքիւր բրօմէս պիլէթլէրինտէն սաթըն ալմաք իտէյէնլէր ասըլ պիլէթլէրին սահիպինէ միւրաճաաթ իյլէյուպ կերէք անա պիլէթլէրինի, վէ կերէք պու կիւնէ գըտար քաղանան նուժէրօլարըն լիստալարընը կէօրէպիլըրէր :

Չիյատէ մալիւմաթ ալմաք իտէյէնլէրին մէզքիւր մաղազայա միւրաճաաթ իյլէմէլէրի :

ՏԵՐ ԵՒ ՊԱՏԱՍԻՍԱՐԵԱՆՈՒ

ՕԳՍԷՆ ԽՕՃԱՍԱՐԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ Օ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ

ԵՈՒՍՈՑԵԱՆ ԽԱՆ

ՎԵՐԻՊԵԱՐԿ ԹԻԻ-7